ՍՓՅՈՒՌՔՈՒՄ

ՆՈՐԱՅՐ ՎԱՐԴԱՊԵՏ ՊՈՂԱՐՅԱՆ

ՀԱՄԱՌՈՏ ԱԿՆԱՐԿ ՀԱՅ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՎՐԱ

Հետևյալը համառոտ ակնարկ մըն է, որ նպատակ ունի նախ պատկերացնել հայկական իրավունքները սուրբ վայրերու մեջ, երկրորդ՝ ներկայացնել Ս. Երկրի հայկական վանքերն ու եկեղեցիները, և վերջապես դաղափար մը տալ Ս. Հակոբյանց միաբանության մշակութային գետնի վրա կատարած գործունեության շուրջ։

Ա) ՀԱՅԿԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐ Ս. ՎԱՅՐԵՐՈՒՄ

Երուսաղեմ քաղաքին մեջը և շուրջը կգտնվին միջսգսային հանգամանք ունեցող չորս գլխավոր սրբավայրեր, որոնք են՝ Հիսուսի Մանդյան տաճարը՝ ի Բեթղեհեմ, Ս. Գերեզմանի տաճարը՝ հին Երուսաղեմի պարիսպներեն ներս, Քրիստոսի Համբարձման մատուռը՝ Ձիթենյաց լեռան վրա, և Ս. Աստվածածնի գերեզմանի եկեղեցին՝ Հոլսափատի ձորին մեջ։ Այս չորս կարևոր սրբավայրերուն իրրև սեփականատեր և իրավատեր ճանչցված ազգերու կարգին գրլխավորներեն մին է Հայը, որ քրիստոնեության հնագույն դարերեն սկսյալ եղած է Ս. Երկրի կարևորագույն համայնքներեն մին։ Հայտնի է, որ հայ ժողովուրդը և եկեղեցին վաղուց ի վեր ներկայացված են Ս. Երկրին մեջ Ս. Հակոբյանց առաքելական աթոռին միաբանության միջոցով, որ գլխավորված է իր պատրիարքով։ Կարժե, որ հստակ կերպով տեսնենք այն ուշագրավ բաժինը, որ հայությունը կրցած է պահել անհաշիվ զոհողության գնով։

1) Ս. Մանդյան տաճարը.— *Սա բյուզանդական հոյակապ շինք մըն է, կառուցված այն քարայրին վրա, ուր ծնավ Հիսուս։ Մեծ բազիլիկ մըն է, սյունազարդ, և փայտյա առաստաղով։ Եկեղեցվույս հյուսիսային թևը կպատկանի հայոց, ուր ունին երկու պատարագամատույց սեղաններ։ Բուն այրին մեջ կգտնվին Հիսուսի ծնած տեղը և մսուրը.*

Ս. Մանդյան տաճարը և Հայոց վանքը, Բեթղեհեմ

այս վերջինը այժմ լատիններու ձեռքն է։ Հիսուսի ծննդյան տեղույն վրա շինված է պատարագամատույց սեղան մը, որ հատուկ է հայոց և հունաց։ Ամեն օր նույն սեղանին վրա հաջորդաբար Ս. Պատարագ կմատուցանեն հույները և հայերը։ Կարժե հիշել նաև, որ տաճարին սյոմագարդ մեծ գավիթը ունի Հեթում Ա. Թագավորի ժամանակ հայոց կողմե շինված փայտյա դեղաքանդակ դուռ մը, որուն վրա կկարդացվի սա արձանագրությունը.

«Թվին ՈՀԶ (1227) կազմեցաւ դուռս սուրբ Աստուածածնիս ձեռամբ Տէր Աբրահամու եւ Տէր Առաքելոյ ի թագաւորութիանս Հայոց Հեթմոյ որդւոյ Կոստանդէի. Քրիստոս Աստուած ողորմի աշխատաւորացս։

Ս. Հարության տաճարը, Երուսաղեմ

2) Ս. Գերեզմանի տաճարը.—Մենք սովորաբար կկոչենք զայն Ս. Հարությունն։ Սա բազմաթիվ եկեղեցիներ և մատուռներ պարունակող մեծազանգված շենք մըն է, նախապես կառուցված բյուզանդական կայսրերու կողմե և ապա վերանորոգված հայերու և խաչակիրներու ձեռքով։ Շենքը բավական վնասվեցավ 1927-ի մեծ երկրաշարժին և կառավարությունը հարկավոր համարեց երկաթե և փայտե պահպանակներ զնտեղել վտանգավոր փլուզումներու դեմ իբրև զգուշություն։ Ս. Հարության տաճարի նորոգության խնդիրը թերևս մոտիկ ապագային միաբանությանս համար դառնա կարևոր և ծանրակշիռ հարց մը, որուն բարվոք լուծումը պիտի կարոտի մեծամեծ դումարներու։ Այս տաճարին մեջ բազմաթիվ են հայոց սեփական մասերը և իրավունքները. հիշենք ատոնց գլխավորները միայն.

ա) Ս. Գերեզման.— Սա հատուկ է երեք մեծերուն, այսինքն հայոց, հունաց և լատինաց։ Ս. Գերեզմանին վրա ամեն գիշեր հաջորդաբար կպատարագեն հույները, հայերը և լատինները։

բ) Երկրորդ Գողգոթայի եկեղեցին.— Սա սեփական է հայոց, ուր ամեն օր կես գիշերին կկատարեն ժամերգություն և ամիսը երկու կիրակի կմատուցանեն Ս. Պատարագ։

գ) Ս. Գրիգոր Լուսավորչի եկեղեցին.— Փոքրիկ առանձին եկեղեցի մըն է, որ Ս. Հարության տաճարի մակերեսեն ավելի ցած կգտնվի, Քրիստոսի խաչափայտին գտնված տեղույն կից։ Սա ևս սեփական է հայոց, ունի պատարագամատույց երկու սեղաններ, որոնց վրա տարին քանիցս Ս. Պատարագ կմատուցվի հատկացյալ տոներուն։ Այս եկեղեցին ներքին ամբողջական նորոգությամբ պայծառացավ Թորգոմ և Մեսրոպ պատրիարքներու շրջանին։

Ս. Հարության տաճարին մեջ շաբաթը երեք օր՝ ուրբաթ, շաբաթ և կիրակի երեկոներուն հայերը մասնավոր թափոր մը կդառնան այցելելով այն սուրբ սեղաններուն, որոնք նվիրված են Քրիստոսի չարչարանքներուն և այլ տնօրինական հիշատակներու։

Ս. Հարության տաճարին մեջ, բացի երեք մեծ եկեղեցիներեն, սահմանափակ իրավունքներ ունին նաև հայոց հետևակ ազգերեն դպտիները և ասորիները։

Ս. Հարության տաճարին մեջ գիշեր-ցերեկ գրեթե մշտնջենական արարողությանց վայրկյանը վայրկյանին պատրաստ գրանցվելու համար, տաճարեն ներս իրենց հատուկ սենյակներու մեջ բնակություն հաստատելու ստիպված են հայ, հույն, լատին և դպտի հոգևորականներ և կրոնավորներ։

Կարժե հիշել նաև, որ Ս. Հարության տաճարին դռան բանալին կգտնվի ժառանգաբար՝ մահմեդական որոշ ընտանիքներու ձեռքը, որոնք սահմանյալ ժամերուն կբանան և կգոցեն։ Դուռ բանալ տալու իրա-

վունքը կպատկանի երեք մեծ համայնքներուն։

3) Համբարձման մատուռը.— Քրիստոսի Համբարձման անվանի վրա նախապես գտնվող հոյակապ եկեղեցին վաղուց քանդված է։ Ներկայիս բոլորաձև դավիթի մը պեդրոնը փոքրիկ մատուռ մը կա, որուն ներքև կտեսնվի բնական ժայռը, քառանկյուն շըրջանակի մը մեջ։ Հիշյալ դավիթին ներս իրենց քարակերտ սեղաններն ունին հայերը, հույները, ղպտիները և ասորիները, որոնք Համբարձման տոնին, հատուկ վրաններ կանգնելով, Պատարագ կմատուցանեն։ Այս մատռան դռնապաններն ալ վաղնջական սովորության համաձայն տեղացի մահմեդականներ են։

Կարժե հիշել, որ Համբարձման սրբատեղվույն կից հողերու և շենքերու կարևոր մեկ մասը սեփականությունն է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության։

4) Ս. Աստվածածնի եկեղեցին.— Այս եկեղեցին ներկայիս մին է Ս. Քաղաքի ամենեն ինքնատիպ շենքերեն, թաղված ըլլալով հողին ներքև գրեթե իր ամբողջությամբ։ Եկեղեցվո վերին մասը վաղուց քանդված է և սյուներուն խարիսխները ծածկված են 2—3 մետր թանձրությամբ հողի խավով։ Եկեղեցին կիշնվի 45 լայնանիստ սանդուխներով։ Եկեղեցվո կեդրոնեն դեպի արևելք կգտնվի Ս. Կույսին գերեզմանը, առանձին փոքրիկ մատուռի մը մեջ առնված ուր ամեն առավոտ հաջորդաբար Ս. Պատարագ կմատուցանեն հույներ և հայեր։ Շաբթվան մեջ որոշ օրեր տարբեր սեղաններու վրա կպատարագեն ղպտիները երկիցս և ասորիները մեկ անգամ։ Հիշյալ սեղանները սեփականություն են հայոց։

Մոտ երեք տարի առաջ ձմեռնային մեծ հեղեղ մը ամբողջ եկեղեցին լեցուց ջուրով և ցեխով, խոշոր վնասներ տալով ներսի սպասներուն և չափով մըն ալ շենքին այլևայլ մասերուն, այդ պատճառով այժմ հայերը և հույները բանակցության մտած են, որոշ ներքին նորոգություններ կատարելու եկեղեցվո այլևայլ մասերուն մեջ։ Այդ նորոգությունները պիտի արժեն քանի մը հազար ստեռլինգ։ Հույս ունինք, որ պիտի գտնվին եկեղեցասեր և բարեպաշտ ազգայիններ, որոնք իրենց շոշափելի նվիրատվություններով պիտի ուզեն օժանդակել Ս. Աթոռին։

Մեր ազգին համար իրապես պարծանքի առիթ մըն է, որ տիեզերական այս մեծ կրոնքի մայրաքաղաքին մեջ Հայ Եկեղեցին կրցած է գրավել հոյակապ դիրք մը և պահել զայն դարե դար։ Կաթոլիկ և օրթոդոքս բազմամիլիոն ժողովուրդներու կողքին փոքրաթիվ հայությունը ունեցած է և ունի դիրք մը, որ պատիվ միայն կբերե մեր ժողովուրդին։ Այդ պատվաբեր դիրքը կպարտինք մեր նախնյաց անձնական բարեպաշտության և գերազանց հայրենասիրության, այլապես վաղուց հայությունը դուրս շպրտված կըլլար տնօրինական սրբավայրերեն։ Մեծ և անգնահատելի է նաև բաժինը Ս. Հակոբյանց միաբանության, որուն շարքերը միշտ լեցուն հղած են իրենց կյանքերը Աստուծո և ազգին նվիրող հոգևորական և աշխատավոր անդամներով։ Տագնապներ և ճգնաժամեր շատ է տեսեր Ս. Հակոբյանց ուխտանվեր միաբանությունը, բայց ոչ մեկ հուր կամ սուր չեն կրցած բաժնել զայն Քրիստոսի սերեն և անոր կյանքովը և մահովը սրբացած վայրերեն։



Քրիստոսի Ս. Գերեզմանի մուտքը

Պարբերական այդ տագնապներեն մին նորեն հարվածեց Ս. Հակոբյանց միաբանությունը երեք տարիներ առաջ, որուն պատճառած վերքերը դարմանելու համար տասնյակ տարիներու աշխատանք պետք է։ Մեր միաբանությունը վստահ է, որ Աստուծո և ազգին օգնությամբ պիտի կրնա վերստին գտնել ինքզինքը և շարունակել իր պարտականությունները, բարձր պահելու համար Հայ Եկեղեցվո դրոշը տնօրինական սրբավայրերու տեսանելի տուներուն վրա։

Բ) Ս. ԵՐԿՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՎԱՆՔԵՐԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆԵՐԸ

Հայերը պատմական հիշատակարաններու համաձայն ժամանակին Ս. Երկրին մէջ ունեցած են 72 վանքեր։ Անոնցմէ շատ քիչերը կմնան այսօր մեր ձեռքը, մեծագոյն մասը դարերու աննպաստ բերումներուն հետևանքով ավերված են կամ դրավված մրցակից եկեղեցիներու կամ տիրապետող ցեղերու կողմէ։ Այդ վանքերեն մեկ կարևոր մասին շուրջ հետազոտական ուսումնասիրություն մը հրատարակած է Մկրտիչ Եպիսկոպոս Աղավնունի։ Այժմ հայոց ձեռքը գտնվող վանքերն ու եկեղեցիներն են հետևյալները.

Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, Երուսաղեմ

1) Ս. Հակոբյանց վանք, Երուսաղեմ.— *Սա հայոց ամենամեծ և նշանավոր վանքերեն մին է։ Գրեթե չկա հայ մը որ լսած չըլլա անոր անունը. Օտարներու մոտ ևս մեծ է անոր համբավը։ Ս. Հակոբյանց վանքը կգտնվի Երուսաղեմի պարիսպներեն ներս, Սիոն բլուրին վրա և հայոց սեփական եղած է անհիշատակ ժամանակներե ի վեր։ Այս ընդարձակ վանքին մեջ կգտնվին երկու եկեղեցիներ.*

ա) Տաճար Ս. Հակոբյանց.— *Պատրիարքանիստ մայր եկեղեցին է սա, կառուցված ի հիշատակ Երուսաղեմի առաջին եպիսկոպոս Յակոբոս Տյառնեղբայր և Զեբեդյան Հակոբոս առաքյալներու. մեկուն մարմինը և մյուսին գլուխը ամփոփված են այս սրբավայրին մեջ։*

Ս. Հակոբյանց մայր տաճարը հայկական ճարտարապետության գեղեցիկ նմուշներեն մին է։ Յորս հաստաբեստ մույթերու վրա բարձրացող երկնասլաց կաթողիկեն Սալահեդդինի հրամանով քանդված է և ետքեն շատ համեստ գմբեթ մը դրված անոր տեղ։ Զմայլելի է ավագ սեղանի փայտյա դեղատքանդակ և ոսկեզօծ խաչկալը։ Որմերը ծածկված են մեծադիր նկարներով։ Առաստաղեն կախված արծաթյա կանթեղները անզուգական հրապույր մը կուտան տաճարին։ Կապույտ հախճապակիները, երկաթյա բազրիքները, սատափաղարդ դռները, ասեղնագործ վարագույրները, խճանկար հատակները, նրբահյուս գորգերը, ամենքը հայկական արվեստներու ճոխությամբ կպարուրեն տաճարին բոլոր կողմերը։

Մայր տաճարին կից են հյուսիսեն Ս. Ստեփանոսի մատուռը և հարավեն Ս. Էջմիածնի եկեղեցին, ուրկե սանդուխով մը կելլվի դեպի կանանց վերնատունը։

բ) Ս. Թորոս.— *Ս. Հակոբեն շատ ավելի նոր շենք մըն է սա, պարզ բայց գեղեցիկ։ Հոս այժմ տարին մեկ անգամ միայն Ս. Պատարագ կմատուցվի Ս. Թեոդորոսի տոնին առթիվ։ Եկեղեցին նկատված է հարմարագույն վայրը ամփոփելու համար մեր երանելի նախնյաց ժրաջան մատներով ղծագրված ավելի քան երեք հազար ձեռագրերը։*

2) Ս. Հրեշտակապետաց վանք և եկեղեցի, Երուսաղեմ.—*Ս. Հակոբյանց մայրավանքին հաղորդակից փոքր վանք մըն է սա, որ կգտնվի նախապես հրեից Աննա քահանայապետին պատկանող տան տեղը։ Հոս կհարգվի հնամենի ձիթենի մը, որ ընձյուղած է այն ծառեն, որուն կապվեցավ Հիսուս պահ մը։ Այդ պատճառավ տեղական լեզվով այդ վանքը ծանոթ է իբրև Տեյր-էլ-Զեյթունե՝ Ձիթենեաց վանք։ Վերջին դարերուն այս վանքը մասնավոր կերպով հատկացված է հավատավոր կանանց, որոնցմե մեկ-երկու տասնյակ միշտ կգտնվին անդ։ Վանքը ունի մեկ փոքրիկ եկեղեցի նվիրված Ս. Հրեշտակապետաց։*

(Շարունակելի)